

լռութենէն, որ կը տիրէր թէ գաղտնիութեան կարգադրութիւն մը կար. հեծելոց ձիերը անմիջապէս պատրաստ ձիասպասք կառնուին իրենց սահմանեալ ախոռները կը տանէին, լռիկ սպասաւորներ հիւրերուն կ'առաջնորդէին դահլիճը, ուր երկու-երկու, երեք-երեք, չորս-չորս խմբիկներու բաժնուած հրաւիրչալք կամաց ձաջնով կը խոսէին. քանի մը կանթեղ աղօտ լուչս կը ձգէին ժողովականաց վրայ:

Յովնան հետազօտ աչք մը ձգելով տեսաւ, որ բոլոր երիտասարդ իշխանագունք էին սոքա, իրեն տարեկից քառասունն անցած մարդ չէր գտներ եւ ոչ մէկ հատ. կը փնտրէր եւ չէր տեսներ զաշոտ, եւ ինքնիրեն՝ «լաւ՛, տիրաբար թող վարուի, հո՛գ չէ, միայն թէ գիտնա կառավարելի, կ'ըսէր, եւ առանձին անկիւն մը քաշուած կը ծածկուէր:

Իսկ Գուրգէն Նոյն միջոցին արդէն հաջանի ամէնուն ոչ անուամբ այլ իւր հսկայ հասակաւ, համարձակ կերպիւ կը մօտենար իւրաքանչիւր խումբի, իւր մեծ աչքերուն նայուածքը ձգելէն վերջ կ'անցնէր ամէնուն քովէն՝ սրահին մէջ կեցած գիովնան կը փնտրէր, երբ դռան երկու փեղկերը միանգամաջն բացուեցան, եւ Աշոտ Բագրատունի երեւցաւ իւր եղբօր Շապիոյ եւ քանի մը Բագրատունի իշխանաց հետ մէկտեղ: Ամէնքը ոտք ելան. իսկ նա քաղցր եւ ծանր քաղաքավարութեամբ, ձեռքը սրտին վրայ դնելով զամենքը ողջունեց, անցաւ նստաւ եւ ձեռքով զամենքը հրաւիրեց նստելու: Նոյն միջոցին տեսնելով զԳուրգէն, որ չէր ճանչեր, այլ երեւակայեց, ելաւ տեղաց «Գուրգէն իշխան» ձայնեց իւր խոշոր ու փայլուն ձայնով. իսկ նա՝ «Աւասիկ եմ, իշխան քաջ, միայն թէ ընկերս կը փնտրեմ» պատասխանեց եւ, տեսնելով գիովնան քաշուած մէկ կողմ, մօտեցաւ թռնեց ձեռքէն՝ բերաւ եւ իւր եւ Աշոտոյ մէջ նստեցուց:

Գուրգէնի այս ըրածը ամէնուն եւ Աշոտոյ անգամ զարմանք պատճառեց. միայն ինք Գուրգէն էր, որ անխռով աչք պտըտցնելով կ'իմացնէր թէ իր տուած պատիւը այդ լեռնականին, այդ շինականին՝ արժանաւոր յարկ մ'էր: